

անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, եւ բռնանային ի վերայ բազում գաւառաց եւ բերդից, զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր:

Եւ այս անուանք են քաջ նահատակացն, որ անդէն ի տեղւոջն կատարեցան.

Յազգէն Մամիկոնէից Քաջն Վարդան հարերս երեսուն եւ երեք արամբբ. յազգէն Խորխոռունեաց Խորէնն Կորովի իննետասն արամբբ. յազգէն Պալունեաց Արին Արտակ յիսուն եւ եւթն արամբբ. յազգէն Գնթունեաց Զարմանային Տաճատ իննետասն արամբբ. յազգէն Դիմաքսենից Իմաստունն Հմայեակ քսան եւ երկու արամբբ. յազգէն Քաջբերունեաց Հրաշակերտն Ներսէս եւթն արամբբ. յազգէն Գնունեաց Մանուկն Վահան երիւք արամբբ. յազգէն Ընծայնոց Արդարն Արսէն եւթն արամբբ. յազգէն Սրուանծտայ Յառաջադէմն Գարեգին երկու հարազատաւքն եւ ութուտասն արամբբ: Այս երկերիւր ութսուն եւ եւթն նահատակք, ընդ ինն մեծամեծ նախարարսն անդէն ի տեղւոջն կատարեցան: Եւ յարքունի տանէն եւ ի տանէն Արծրունեաց եւ յիրաքանչիւր յայլոց նախարարաց տանէն... եւ այլ եւս եւթն հարեր եւ քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին... Եւ միահամուռ լինի ամենայն **հազար եւ երեսուն եւ վեց:** Իսկ ի կողմանէ ուրացելոցն՝ *[Ա ծեռ. եւ հեթանոսաց]* անկանէր յայնմ աւուր **երեք**

¹ Տեղին նշենք, որ ինչպէս ցոյց տուեց Մորուս Հասրաթեանի 1966 թ. «Որտե՞ղ է թաղուած Վարդան Մամիկոնեանը» յօդուածի (տե՛ս Հասրաթեան 1985, 65-78) հետքերով «Երկիր եւ մշակոյթ» միութեան կազմակերպած Անգեղակոթի գիտարշաւը (24-25 Յուլիս, 2017), ըստ ամենից հաւանական վարկածի, անկախ ժողովրդական ասանդութիւնից՝ հէնց Անգեղակոթի վերին տապանատան՝ թէկուզեւ հետագայում ժողովրդի կողմից «Վարդանի գերեզման» անուանուած կոթողի կամ կոթողների (Եղիշէի խօսքով՝ «Բազում արծանք կանգնեալ էին յանուն նոցա /Վարդանանց/») տակ են թաղուած (ինչպէս որ մի մասն էլ, թերեւս՝ Շաղատի եկեղեցու առջեւ, որն այն դարերում Սիւնիքի գլխաւոր եկեղեցին էր) Աւարայրի ճակատամարտի մասնակից՝ Վասակ Սիւնու կողմնակից սիւնեցի ազնուական զոհերի (Եղիշէի՝ «ուրացելոցն») դիերը, որ Վասակը ճակատամարտի յաջորդ օրը, անկախ որեւիցէ դժուարութիւնից պիտի սայլերին բարձած եւ ուղարկած լինէր Սիւնիք (այն դարերում ընդունուած պարտադիր կարգի համաձայն՝ հայրենի կալուածքում կամ երկրամասի գլխաւոր սրբավայրում ամփոփելու համար): Հաւանական է մտածել, որ հէնց այդ սգոյ թափորի մէջ նա տեղաւորել էր նաեւ իր պատուաւոր աւարը դարձած՝ սպարապետի եւ Վարդանանց միւս 8 կամ 9 ազնուազարմ նահատակների մասունքները, որոնց, սակայն, թաղել են (Վասակի բացակայութեամբ) մէկ այլ մօտիկ տեղ, թերեւս՝ Անգեղակոթից Շաղատ իջնող ճանապարհին գտնուող եւ շրջակայ ժողովրդի կողմից այսօր չափազանց սիրուած «Սուրբ Վարդան» կիսաժայռափոր մատուռի խորանում կամ մուտքի առջեւ: